

No. 47325

**Argentina
and
Armenia**

Agreement between the Government of the Argentine Republic and the Government of the Republic of Armenia on cooperation in the field of plant protection and phytosanitary quarantine (with annexes).¹ Yerevan, 31 August 2005

Entry into force: *23 July 2007 by notification, in accordance with article 18*

Authentic texts: *Armenian, English and Spanish*

Registration with the Secretariat of the United Nations: *Argentina, 12 April 2010*

**Argentine
et
Arménie**

Accord entre le Gouvernement de la République argentine et le Gouvernement de la République d'Arménie relatif à la coopération en matière de protection des plantes et de quarantaine phytosanitaire (avec annexes).¹ Erevan, 31 août 2005

Entrée en vigueur : *23 juillet 2007 par notification, conformément à l'article 18*

Textes authentiques : *arménien, anglais et espagnol*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Argentine, 12 avril 2010*

¹ The annex provided by Armenia is different from that provided by Argentina. — L'annexe fournie par l'Arménie est différente de celle fournie par l'Argentine.

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Արգենտինայի Հանրապետության Կառավարության և Հայաստանի
Հանրապետության Կառավարության միջև
բույսերի պաշտպանության և ֆիտոսանիտարական կարանտինի
բնագավառներում համագործակցության մասին

Արգենտինայի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի
Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ցանկանալով ամրապնդել երկկողմ համագործակցությունը բույսերի
պաշտպանության և ֆիտոսանիտարական կարանտինի բնագավառներում,
նպատակ ունենալով պաշտպանել երկու պետությունների տարածքները
բույսերի որոշ հիվանդությունների, վարակների և մոլախոտերի (այսուհետ՝
կարանտինային վարակներ) ներմուծումից ու տարածումից և սահմանափակել
դրանց կողմից պատճառվող վնասները, ինչպես նաև դյուրացնել բույսերի և
բուսական ծագման արտադրանքի փոխադարձ առևտուրը և փոխանակումը,
համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի ներքո օգտագործվող տերմիններն ունեն հետևյալ
նշանակությունը.

- բույսեր՝ կենդանի բույսեր և դրանց կենդանի մասեր՝ ներառյալ սերմերը և
սաղմնալազման.
- բուսական արտադրանք՝ չվերամշակված բուսական ծագման
արտադրանք, (ներառյալ հացահատիկային բույսերը), ինչպես նաև
վերամշակված արտադրանք, որոնք իրենց բնույթով կամ վերամշակման
արդյունքում կարող են վտանգ ներկայացնել վարակների ներմուծման կամ
տարածման հետ կապված.
- կանոնակարգվող առարկա՝ որևէ բույս, բուսական արտադրանք, պահեստ
կամ փաթեթավորման վայր, բեռնարկղ, հող և այլ օրգանիզմ կամ նյութ, որը
կարող է պարունակել կամ տարածել վարակներ, որոնք ենթակա են
ֆիտոսանիտարական միջոցառումների անցկացմանը, մասնավորապես,
միջազգային փոխադրման ժամանակ.
- ֆիտոսանիտարական գործողություն՝ որևէ պաշտոնական գործողություն,
ինչպիսին է ստուգումը, տեստավորումը, հսկողությունը կամ ախտահանումը, որն
իրականացվում է ֆիտոսանիտարական կանոնների կամ ընթացակարգերի
կիրառմամբ.
- կանոնակարգվող վարակ՝ կանոնակարգվող կարանտինային կամ ոչ
կարանտինային վարակ.
- կարանտինային վարակ՝ ռիսկային գոտու համար տնտեսական
պոտենցիալ կարևորություն ներկայացնող վարակ, որը դեռևս գոյություն չունի,
կամ եթե գոյություն ունի, ապա տարածված չէ և գտնվում է պաշտոնական
հսկողության ներքո.
- կանոնակարգվող ոչ կարանտինային վարակներ՝ ոչ կարանտինային
վարակներ, որոնց առկայությունը բույսերում կարող է ունենալ անընդունելի
տնտեսական ազդեցություն, և այդ պատճառով էլ այն կանոնակարգվում է
ներմուծող Կողմի տարածքում.

- կարանտինային վարակներ՝ ներքին տնտեսության համար պոտենցիալ կարևորություն ներկայացնող և Կողմերի կանոններով սահմանված վնասակար օրգանիզմներ, որոնք դեռևս գոյություն չունեն, կամ եթե գոյություն ունեն, ապա տարածված չեն և գտնվում են հսկողության ներքո:

Հոդված 2

Սույն Համաձայնագրով նախատեսված հատուկ համագործակցությունը պետք է իրականացվի յուրաքանչյուր Կողմի պետությունում գործող կիրառելի կանոնների և կարանտինային վարակների ցուցակի համաձայն (Հավելված 2):

Հոդված 3

Կողմերը պարտավորվում են կիրառել ցանկացած հնարավոր միջոց՝ մի Կողմի տարածքից դեպի մյուս Կողմի տարածքը կարանտինային վարակների անցումը կանխելու համար:

2-րդ Հավելվածում նշված կարանտինային վարակների ցուցակը կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Կողմերի իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են փոխել կամ լրացնել կարանտինային վարակների ցուցակը:

Վերոհիշյալ փոփոխությունների ու լրացումների և դրանց ուժի մեջ մտնելու օրվա մասին դիվանագիտական ուղիներով կհաղորդվի մյուս Կողմի իրավասու մարմիններին:

Հոդված 4

Մյուս Կողմի տարածքում կանոնակարգվող վարակների ներմուծումը և տարածումը կանխելու համար բույսերի կամ բուսական արտադրանքի ցանկացած արտահանում պետք է ուղեկցվի Կողմի՝ այդ նպատակով նշանակված մարմնի կողմից տրված ֆիտոսանիտարական վկայագրով, որը պետք է համապատասխանի Ֆիտոսանիտարական պաշտպանության միջազգային կոնվենցիային (IPPC):

Ֆիտոսանիտարական վկայագիրը պետք է հաստատի.

- որ արտահանվող բույսերը և բուսական ծագման արտադրանքը զերծ են կանոնակարգվող վարակներից, որոնք նշված են սույն Համաձայնագրի Հավելվածում և որոնք հաստատվել են որպես ֆիտոսանիտարական պահանջներ յուրաքանչյուր ապրանքի համար՝ համաձայն համապատասխան Վարակի ռիսկի անալիզին.

- այդ բույսերի և բուսական արտադրանքի ծագման վայրը.

- ախտահանումը, որին ենթարկվել է բույսը.

Բուսական արտադրանքի վերարտահանման դեպքում ծագման երկիրը պետք է նշվի:

Հոդված 5

Կանոնակարգվող առարկաները ենթակա են ֆիտոսանիտարական վերահսկման՝ Կողմերի համապատասխան կանոններին և կանոնակարգումներին համաձայն:

Հողված 6

Ֆիտոսանիտարական վկայագիրը չի բացառում մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծվող բույսերի և բուսական արտադրանքի նկատմամբ ներմուծող Կողմի հսկողության իրավունքը:

Հողված 7

Ֆիտոսանիտարական կանոններին հակասող յուրաքանչյուր կարանտինային վարակի կամ իրավիճակի հայտնաբերման դեպքում ներմուծող Կողմի իրավասու մարմինը պետք է այդ մասին անհապաղ հայտնի արտահանող Կողմի իրավասու մարմնին:

Հողված 8

Կանոնակարգվող վարակների ներմուծումն ու տարածումը կանխելու նպատակով Կողմերը պետք է իրավունք ունենան ձեռնարկելու համապատասխան ֆիտոսանիտարական միջոցներ՝ որպես Վարակների ռիսկի անալիզի արդյունք:

Հողված 9

Կողմերը արգելում են հողի ներկրումը (բացառությամբ տորֆի), ինչպես նաև խոտի, ծղոտի, մամուտի, կեղևի կամ այլ նյութերի օգտագործումը իբրև փաթեթավորման նյութ, որոնք կարող են ներս բերել կամ տարածել կարանտինային վարակներ:

Հողված 10

Երկու երկրների դիվանագիտական ներկայացուցիչներին և նրանց անձնակազմներին ուղարկված՝ բույսերի և բուսական արտադրանքի փոխանակումները պետք է համապատասխանեն սույն Համաձայնագրի ֆիտոսանիտարական պահանջներին:

Հողված 11

Կողմերը պետք է ապահովեն ֆիտոսանիտարական հսկողություն սահմանային կետերում (մայրուղիներ, երկաթգիծ, ծովային և օդային ուղիներ), որոնք ստեղծված են բույսերի կամ բուսական ծագման արտադրանքի ներկրման, արտահանման կամ տարանցման համար:

Հողված 12

Երկու Կողմերը, ընդունելով գիտական բնագավառում համագործակցության առավելությունները և հնարավորության դեպքում բույսերի պաշտպանության մեթոդների և միջոցների միասնականացման պատշաճ հնարավորությունը, կխրախուսեն համագործակցությունը հետևյալ միջոցներով.

- տեղեկատվության փոխանակում անտառների և մշակաբույսերի ֆիտոսանիտարական վիճակի, վարակների դեմ պայքարի միջոցների, ինչպես նաև ստացված արդյունքների մասին.

- ֆիտոսանիտարիայի և բույսերի պաշտպանության վերաբերյալ օրենքների, կանոնների և մասնագիտական գրականության փոխանակում, որը այս բնագավառում երկու երկրների փորձագետների համար կապահովի ավելի խորը գիտելիքների ձեռքբերումը:

Հոդված 13

Կողմերը կարող են միմյանց տրամադրել տեղեկատվություն կարանտինային վարակների հայտնաբերման կամ տարածման մասին՝ մշելով, որ Կողմերից ոչ մեկը չի կարող ստացված տեղեկատվությունը տրամադրել երրորդ երկրի:

Հոդված 14

Սույն Համաձայնագրին համապատասխանելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, Կողմերը կարող են իրենց ներկայացուցիչների միջոցով կազմակերպել համատեղ խորհրդակցություններ:

Կողմերը ժամանակ առ ժամանակ կորոշեն խորհրդակցությունների անցկացման ժամանակը, տեղն ու օրակարգը, ինչպես նաև ծախսերը հոգալու եղանակը:

Հոդված 15

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և իրականացման հետ կապված վիճելի հարցերը Կողմերը կլուծեն ուղղակի կապերի միջոցով կամ այլ ընդունելի եղանակներով: Եթե այս ճանապարհով հնարավոր չլինի համաձայնության հասնել, վեճերը կլուծվեն դիվանագիտական ուղիներով:

Հոդված 16

Սույն Համաձայնագրի համակարգման և իրականացման համար Կողմերի պատասխանատու իրավասու մարմիններն են.

- արգենտինական կողմից՝ գյուղատնտեսության, անասնապահության, ձկնաբուծության և սննդամթերքի քարտուղարությունը.
- հայկական կողմից՝ գյուղատնտեսության նախարարությունը:

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի իրավասու մարմինները ուղղակի կապի մեջ կլինեն և կարող են համաձայնագրեր կնքել այդ նպատակով:

Հոդված 17

Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է ազդեն Կողմերի այն պարտավորությունների վրա, որոնք բխում են այլ երկկողմ և բազմակողմ համաձայնագրերից: